



ՄԱՅՐ ԱԹՈՌԻՍ ԾԵՐՈՒՆԻ ՄԻԱԲԱՆ

ԴՐԻՖԻՋԻՍ ՎԵՐԹՈՂՊԵՏ ՑԵՐ ՅԵԿԱՎԵԼԻԵՎՆ

ՅՈՒՆԻՍԻ 7-ին ցերեկի 4-ժամին

Հանգեաւ ի Տէր.

Հանգուցեալ Գրիգորիս վարդապետ Տէր Յակովիսոն  
ծնուել է Էջմիածնի գտառուի Սամազար գիւղում 1842  
թուին Մանկութիւնից 1856 թուին մտնելով Մայր Աթու  
ոփս ժառանգուորաց գպրոցը աւարտել է ուսման ընա  
թացքը և ընդունել է հոգեորակոն կոչումն իրու Մայր  
Աթոռի միաբան 1864 թուի օգոստոսի 5-ին Մկրտիչ արա  
քեպիսկոպոս Բարամեանից Ա. Գայիանէի վանքում ձեռա  
նադրուելով Մարկարագ։ 1867 թուի Մարտի 26-ին Յովհաննէս արքեպիսկոպոս Ասլանեանից նոյն Ա. Գայիանէի  
վանքում ձեռնադրուել է արեգայ։ 1872 թուին Մայիսի  
3-ին Ա. Շողակաթի վանքում Պետրոս եպիսկոպոս Վեհա  
պետեանից ստացել է մահաւոր վարդապետութեան կոչ  
չումն։

Բացի այլ և այլ յանձնաբարութիւններից Հանգուցեալը  
վարել է հետեւեալ պաշտօնները 1864 թուին նշանակուում  
է ագարակի տեղուչ 1867 թուին յուլիսի 1-ին Սինօդի  
հրամանով կարգուել Զարեքայ վանքի վանահայր։ 1868  
թուի Մայիսի 1-ին Վրաստանի և Խմերէթի Հայոց թեմի  
առաջնորդ Մակար արքեպիսկոպոսի միջնորդութեան հա  
մաձայն վարել է և Գանձակի Փոխանորդի պաշտօնը մինչև  
1868 թուի մայիսի 13-ը։ 1875 թ. նոյեմբերի 10-ին Սի-  
նօդի № 2890 հրամանով կարգուել է նոր Նախիջեանի Ա.  
Խաչ վանքի վանահայր։ 1878 թ. յունվարի 30 կարգուել  
է Սինօդի հրամանով նույնի վեճակի փոխանորդ։ 1882 թ.

յունվարի 1-ին երջանկայիշատակ Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոսի կոնդակով նշանակուել է Ա. Էջմիածնի Վանական կառավարութեան անդամ։ 1887 թուին յունիսի 9. ին կարգուել է Գանձակի վիճակի Փոխանորդ նոյն պաշտօնով 1889 թուի սեպտեմբերի 14. ին։ 1895 թուի յունվարի 27. ին նոյն պաշտօնով փոխադրւում է Տաթեեի վանքը։ 1898 թ. նոյեմբ. 2. նոյն պաշտօնով նորից փոխադրւում է Նուխի, և իւր խնդրքի համեմատ արձակուելով պաշտօնից՝ 1901 թուի փետրուարի 20. ին նշանակում է Ա. Գայիանէի վանահայր։

Հանգուցեալ Գրիգորիս վարդապետը վարել է և դըպրոցական պաշտօններ։ 1874 թուին ձեմարանի բացման ժամանակ կարգւում է ձեմարանի վերակացու, վարել է Վաղարշապատի երկու սեռի ծխական և նախիջնանի վանական դպրոցներում կրօնուառուցի պաշտօները մի քանի տարիներ։

Իւր բարւոք պաշտօնավարութեան համար վարձաւրուել է 1869 թուի դեկտեմբերի 1-ին մետաքսեայգունաւոր փիլոնով։ 1887 թուի նոյեմբերի 15. ին վարդապետական ականակուռ խաչով։

Գրիգորիս վարդապետը լաւ ընկեր էր. լաւ և պարտաճանաչ հոգեորական, մարդասէր և զգայուն աղգային, դպրոցական և եկեղեցական խնդիրներում։

Յանձին Գրիգորիս վարդապետի Մայր Աթոռոյս միասնութիւնը զբկուեց իւր ձերունի, սրտացաւ ու փորձառու մի գործոն անդամից։

Հանգիստ երկրաւոր նշխարներիդ պատուական ձեռունի։

